ԳՐԱԲԱՐԻ ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ժ. Բ. ԹՈՍՈՒՆՅԱՆ

Գրաբարում մի քանի նախադրություններ և նախադրության դերում հանդես եկող բառեր պահանջում են որևէ նախդիր կրող հոլովով խնդիր։ Այսպես՝ փոխանակ, փոխարէն *նախադրությունները վերցնում են ընդ նախդիրը կրող սեռականով, զոյգ բառը՝ ընդ նախդիրը կրող տրականով,* թող, իբր, իբրև, իբրու, որպէս *բառերը՝ զ նախդիրը կրող հայցականով,* դէպ, հուպ, մերձ, մօտ, մինչ, մինչև *բառերը՝* առ, ի (յ), ց *նախդիրները կրող հայցական հոլովով (նախդրիվ տրականով),* շուրջ-ը՝ զ *նախդիրը կրող գործիականով խնդիրներ*[1]։

Ինչպես նշվեց, զ *նախդիրը հիմնականում գործածվում է հայցական հոլովով խնդիր ընդունող նախադրությունների հետ, բացառությամբ* շուրջ-ի *(գործիական)։ Քանի որ հայցական խնդրով գործածվող վերոհիշյալ նախադրություններն արտահայտում են բաղդատական հարաբերություն, ուստի դրանց խնդիրը դրվում է որոշյալ առմամբ։ Օրինակ՝ «Եւ ի գունդս գունդս զգազանսն բաժանէր, և առ մի մի փիղ երեք հազար սպառազէնք,* թող *զայլ* զ ո ր ս ն *ամենայն» (Եղ., էջ 115)*[2]*։ «Ի ձեռն էառ* իբրև զ վ ա հ ա ն*, և ագաւ զնա* իբրև զ զ ր ա հ *ս» (Ն. տ., էջ 91)։ «Որ ի սկզբանէն արար և հաստատեաց զհիմունս երկրի, և ձգեաց զերկինս* որպէս զ խ ո ր ա ն *» (Բուզ., էջ 68)*[3]*։*

Հարկ է նկատել նաև այն, որ իբր, իբրև, իբրու, որպէս *նախադրությունները կարող են գործածվել և մյուս հոլովների (նաև ուղղականի) հետ։ Այս դեպքում դրանք գործածվում են առանց* զ *նախդրի։ Օրինակ՝ «Զի մի՛* իբրև վ ն ա ս ա կ ա ր ք *մատնեսցին յիրս արքունի» (Եղ., էջ 153)։ «Եղիցի նա* որպէս *ծ ա ռ» (Ագաթ., էջ 334)*[4]*։*

Ընդ նախդիրը սեռական հոլովի հետ արտահայտում է փոխարինության հարաբերություն, ինչպես՝ «Մի՛թէ յորմէ զորդի՞ն խնդրեաց, թէ գուցե ընդ *որդոյն տ ա լ ո յ՝ զնա բաժ առնուցու» (Եզն., էջ 129)*[5]*։ «Նա ինձ չար* ընդ *բ ա ր ւ ո յ հատոյց» (Բուզ., էջ 140)։*

Այսպիսի հարաբերություն են արտահայտում նաև սեռական խնդրով գործածվող փոխանակ *և* փոխարէն *նախադրությունները։ Օրինակներ. «Արդ՝*

---

1 *Ինչպես հայտնի է, այդ նախադրություններից և որպես այդպիսիք հանդես եկող բառերից մի քանիսը գործածվում են նաև առանց որևէ նախդրի զուգակցության։*

2 *«Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957։*

3 *«Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883։*

4 *«Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց», Տփղիս, 1909։*

5 *«Եզնկայ Կողբացւոյ Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց», Վենետիկ, 1826։*

փոխանակ բարձրաբերձ և վաղաւեր աշտարակին՝ խաչն ճշմարտութեան կանգնեցաւ» (Ագաթ., էջ 295)։ «Վասն որոյ յուսացեալ յողորմութիւն նորա, զոր նախատեցեր, եթէ հատուցի քեզ փոխարէն շարութեանդ քո» (Ղևոնդ, էջ 107)[6]։

Հաճախ այս հարաբերությունը տվյալ նախադրություններն արտահայտում են ընդ նախդիրը կրող սեռական խնդրով, ինչպես՝ «Եւ հատուցին շար փոխանակ ընդ բարւոյ» (Աստ., հ. 2, էջ 602)[7]։ «Սոքա փոխարէն ընդ հոգեղէն յարկացն զոր սոցայն շինեցէք աստ՝ պատրաստեսցեն ձեզ յարկս լուսեղէնս յարքայութեանն երկնից» (Ագաթ., էջ 376)։

Զոյգ ածականը, երբ գործածվում է որպես նախադրություն, ընդունում է տրական հոլովով խնդիր և արտահայտում է համապատասխանության հարաբերություն։ Օրինակ՝ «Քանզի այր սրտեայ էր և անդամովք երկար և ընդ իրեարս պատշաճ, զոյգ մարմնոյն և ոյժ սաստիկ ունելով» (Խոր., էջ 107)[8]։

Տեղ-տեղ զոյգ բառի հետ գործածվում է ընդ նախդիրը, որը տալիս է միասնության գաղափար («հետ», «միասին»)։ Օրինակ՝ «Եւ ընդ մէջ կտրէր զայրն և զոյգ ընդ պարանոցին զգլուխ երիվարին» (Խոր., էջ 231)։

Մի քանի նախադրություններ և նախադրության դերում հանդես եկող բառեր գործածվում են հայցական խնդրով և որևէ նախդրով։ Ըստ որում, նախգիրը հայցական հոլովին տալիս է տրական հոլովի իմաստ (նախդրիվ տրական)[9]։ Դրանք են՝ դէպ||առ, ի. ճուպ, մերձ, մօտ||առ, ի[10]. մինչ, մինչև||առ, ի, ց։ Օրինակ՝ «Տեսանեմք զի դէպ ի մեզ դիմեալ գան» (Փարպ., էջ 129)[11]։ «Իսկ ճուպ առ միմեանս գոլով՝ երևին իբրև զմի պատկեր» (Թ. Ա., էջ 482)[12]։ «Եւ պատահէր նմա մերձ ի սահմանս Վրաց հանդէպ խաղխաղ քաղաքի» (Եղ., էջ 75)։ «Եւ արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչև ի լեառն» (Բուզ., էջ 62)։ «Մինչև ցայժմ քո զիշխանութիւնդ առանց իմ հրամանի կալեալ է» (Փարպ., էջ 114)։

Զ նախդիրը գործածվելով գործիական հոլովի հետ՝ արտահայտում է տարածական հարաբերություն՝ «առարկայի շորս կողմը՝ շուրջը» նշանակությամբ։ Օրինակ՝ «Մթարքն՝ որ զբբօք շողայցեն» (Եզն., էջ 6)։

Այս նույն հարաբերությունն արտահայտվում է նաև շուրջ նախադրության և շուրջանակի իբրև նախադրություն հանդես եկող բառի միջոցով, որոնք գործածվում են զ նախդիրն ունեցող գործիական խնդրով։ Օրինակ՝ «Ապա եկին հասին ամենայն զօրքն Պարսից, շուրջ զբերդաւն նստէին, պահ արկանէին» (Բուզ., էջ 144)։ «Անդէն շուրջ զքաղաքաւն էին»

---

6 «Պատմութիւն հայոց Ղեւոնդեայ Մեծի վարդապետի», Ս. Պետերբուրգ, 1887։

7 «Աստուածաշունչ, բաժանեալ ի չորս հատորս», Վենետիկ, 1805։

8 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց», Տփղիս, 1913։

9 Ա. Աբրահամյան, Դրաբարի ձեռնարկ, Երևան, 1952, էջ 302։

10 Խիստ հազվադեպ նույն կիրառությամբ ի նախդրի փոխարեն գործածվում է ընդ-ը, օրինակ՝ «Եւ մօտ ընդ մուտս արևուն թըմբրութիւն արկանէր ի վերայ Աբրահամու» (Աստ., հ. 1, էջ 29)։

11 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեանն», Տփղիս, 1904։

12 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917։

(Ագաթ., էջ 117)։ «Շուրջ զքաղաքաւն բղխեն ակունք Սագառիս գետոյ» (Ղևոնդ, էջ 157)։ «Բանակեցարո՛ւք զդովաւ շուրջանակի» (Աստ., հ. 3, էջ 624)։

Այսպիսով, բացի ըստ-ից, մյուս հինգ նախդիրները՝ առ, զ, ի (յ), ընդ, ց, *գործածվում են վերոհիշյալ նախադրությունների հետ։*

УПОТРЕБЛЕНИЕ ПРЕДЛОГОВ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА С ПРЕДЛОЖНЫМИ СЛОВАМИ

Ж. Б. ТОСУНЯН

Резюме

В древнеармянском языке несколько предложных слов, требующих различных падежей, употребляется с предлогами: **փոխանակ, փոխարէն, զոյգ** || **ընդ. թող. իբր, իբրև, իբրու, որպէս, շուրջ** || **զ. դէպ, ճոպ, մեռ, մօտ, մինչ, մինչև** || **առ, ի(յ), ց**, однако некоторые из них употребляются и без предлогов.

Кроме предлога **ըստ**, остальные пять предлогов (**առ, ի(յ), զ, ընդ, ց**) в грабаре употребляются с различными предложными словами.